

շաբաթուան իր կեցութեան ընթացքին հաղիպումներ ունեցաւ թեմական խորհուրդին եւ հոգեւորականաց դասուն, եւ Երուսաղէմի Պատրիարքութեան Բարեկամներ Յանձնախումբին եւ այլ ազգայիններու հետ, ներկայացնելով կացութիւնը Սուրբ Տեղեաց եւ Երուսաղէմի կալուածոց հետ կապուած հարցերուն: Առաջին հանդիպումը ունեցաւ Տնօրէն Ժողովի կողմէ հաստատուած Պատրիարքարանիս Կալուածոց Մատակարարման Բաժանմունքի Վարիչ Մարմնի երեք անդամներուն հետ (Ճան Վարդան՝ Ատենապետ, Տֆ. Դաւիթ՝ Նախարար, Գանձապահ, եւ Սեպուհ Պօյանեան՝ Ատենադպիր), ծրագրելով կազմակերպումը Կալուածոց գրասենեակին եւ Յանձնախումբին այցելութիւնը Երուսաղէմ,

Միաբանութեան անդամներուն եւս ներկայացնելու համար ընդհանուր ծրագիրը:

Առաջնորդարանի Ս. Վարդան Մայր Տաճարին մէջ Պատրիարք Սրբազան Հայրը, նախագահեց Հայ դպրոցներու Կեդրոնի Վարիչ Օր. Սիլվա Տէր Ստեփանեանի կազմակերպած Խրիմեան Ճեմարանի Գոլէնական ուսանողներու շրջանաւարտութեան եւ մանուկներու երգչախումբի յայտագիրներուն: Առիթ ունեցաւ նաեւ Նիւ Եօրքի Մէթրօփօլիթըն Միւզիումին մէջ Բիւզանդական Ծրջանի արուեստներու ցուցադրութեան շրջապտոյտը կատարելու առաջնորդութեամբ ցուցահանդէսը կազմակերպող Տֆ. Էվընսին, որ կրցած էր հայկական արուեստի նմոյշներ եւս ապահովել այս ցուցահանդէսին համար: Պատրիարք Սրբազան Հայրը Ս. Աթոռ վերադարձաւ Յունիս 18ին:

Գ.

ԱՄԵՐԻԿԱՅԻ ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒ ԽՈՐՀՈՒՐԴԻ ԱՅՅԸ

Միացեալ Նահանգաց Եկեղեցիներու Խորհուրդի կողմէ նշանակուած իննը հոգինոց խումբ մը, 1997 Օգոստոս 24-Սեպտեմբեր 8 օրերուն, գլխաւորութեամբ Խորհուրդի Նախագահ Տֆ. Ճօէն Գամպելի եւ Փոխ-Նախագահ եւ Հայց. Եկեղեցւոյ Արեւելեան Թեմի Առաջնորդ Խաժակ Արք. Պարսամեանի եւ պետական անձնաւորութեանց, այցելեց Միջին Արեւելքի կրօնական պետերուն, Սուրիոյ, Լիբանանի, Յորդանանի, Իսրայէլի, Պաղեստինի եւ Կիպրոսի մէջ, «փութալով պահել

գմիաբանութիւն Հոգւոյն յօդի խաղաղութեան» իրրեւ գործակիցներ (Եփես. 4:3):

Սեպտեմբեր 5ին տեսակցութիւն ունեցան Պատրիարք Սրբազան Հօր հետ, որուն ծանօթ էին Արեւելեան թեմի մէջ իր առաջնորդութեան տարիներէն, ծանօթանալով Հայ Երուսաղէմի կացութեան, ներկայ ժամանակներու եւ բաղաժանան վերիվայրումի պայմաններուն մէջ: Միաբանութեան հետ նաշէն յետոյ, առիթ ունեցան շրջելու Ս. Յակոբ Մայր Տաճարը եւ Պատրիարքութեան հաստատութիւնները:

Գ. Վ.